ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 51/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի 16.12.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-51/15 բողոք), Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերվող փաստաթղթերը և ԳԲԽ-51/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 21.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.12.2015թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝

Ընթացակարգ) 6-րդ չափաբաժնի շրջանակներում www.armeps.am կայքի միջոցով 27.11.2015թ. Պատվիրատուին է ներկայացվել հաղթող ճանաչվելու համար նախատեսված անհրաժեշտ փաստաթղթեր, սակայն Ընթացակարգի հանձնաժողովի կողմից կայացրած որոշմամբ նույն մրցույթի թիվ 6-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժվել է: Ընկերությունը հայտնել է նաև, որ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն 12.11.2015թ. դրությամբ ունեցել է հարկային պարտավորություններ՝ ԱԱՀ՝ 4.296.000 ՀՀ դրամի, եկամտային հարկ՝ 4.593.000 ՀՀ դրամի և սոց. վճար՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

Նշված հարկային պարտավորությունները Ընկերության կողմից ամբողջությամբ վճարվել են 12.11.2015թ., սակայն բանկային համակարգի միջոցով նշված փոխանցումները ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան հաշիվներին նստել է մեկ օր ուշացումով՝ 13.11.2015թ., ինչի հետևանքով Ընկերության լրացուցիչ տույժի տեսքով առաջադրվել է հարկային պարտավորություն 12 000 ՀՀ դրամի չափով, որը նույնպես վճարվել է Ընկերության կողմից և Ընկերությունը որևէ հարկային պարտավորություն չունի:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 52-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Ընկերությունը նշել է, որ բովանդակային առումով «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից ամբողջությամբ կատարվել է պարտականությունները, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ոչ լիարժեք տեղեկատվության հետևանքով, որը Ընկերության կողմից շտկվել է, ընկերությունը չի ճանաչվել հաղթող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին 07.12.2015թ. որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի 16.12.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) դիրքորոշում չի ներկայացրել, սակայն Կենտրոնի էլեկտրոնային հացեին է ներկայացրել Ընթացակարգի անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, այդ թվում նաև www.armeps.am համակարգով մասնակիցների հայտերի ներկայացման վերաբերյալ էլեկտրոնային էջից քաղվածքը, ՀՀ ֆինանսների նախարարություն կատարած հարցումը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը:

3. ԳԲԽ-51/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 21.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի՝ 16.12.2015թ. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2015թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից հայտը մերժելու որոշումը դադարեցնելու պահանջի մասին բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-51/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-51/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգին ***29.11.2015թ.*** մասնակցության հայտ է ներկայացրել «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ն:

2. Պատվիրատուն 01.12.2015թ. Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային ժամկետանց պարտավորություններ ունենալու վերաբերյալ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որում որպես Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օր է նշել ***27.11.2015թ.:***

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն Ընկերությունը ***27.11.2015թ.*** դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

4. Ընթացակագի գնահատող հանձնաժողովը 07.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի 16.12.2015թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Խորհուրդը հայտնում է, որ Պատվիրատուի կողմից ներկայացված Ընթացակարգի www.armeps.am համակարգով հայտերի ներկայացման էլեկտրոնային էջի քաղվածքի ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությունը հայտ է ներկայացրել ոչ թե 27.11.2015թ., այլ **29.11.2015թ.,** մինչդեռ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված հարցումը և ի պատասխան նշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացությունը վերաբերում է **2015թ. նոյեմբերի 27-ի դրությամբ** Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների առկայությանը, ոչ թե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների համաձայն՝ ***հայտը ներակյացնելու օրվան՝ 2015թ նոյեմբերի 29-ին***:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակագի գնահատող հանձնաժողովը 07.12.2015թ. ժամը 10:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտա-վորություններ ունենալու հիմքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ մերժել է Ընկերության հայտը՝ չունենալով վերջինիս կողմից ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (29.11.2015թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու վերաբերյալ տեղեկատվություն, ինչպիսի պայմաններում Պատվիրատուն խախտել է*** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով և 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի՝ 16.12.2015թ. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/1» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի 07.12.2015թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի կողմից հայտը մերժելու որոշումը դադարեցնելու պահանջի մասին բողոքը բավարարել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամներ՝ **Դիանա Գրիգորյան**

Մարտիկ Նալբանդյան